

Հայերենի բարբառագիտական ատլաս, պրակ 4 (Ե., 2016. 146 էջ): Վերջին տարիներին ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի գիտական աշխատանքներում մեծ թափ է ստացել հայերենի բարբառների մի կողմից՝ նյութերի հավաքագրումը՝ տարբեր բնակավայրերում կատարվող գիտական արշավների ձևով, մյուս կողմից՝ տեսական ուսումնասիրությունների հրապարակումով՝ մենագրություններ, ինչպես նաև ժողովածուներ:

Լույս է տեսել «Հայերենի բարբառագիտական ատլաս» ժողովածուի 4-րդ պրակը (նվիրված Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին, Ե., 2016, 146 էջ), որում ուշադրության առարկա է տարբեր կարգի՝ կորստի մատնված, հարազատ բնօրրանից բռնազրուս տեղահանված, ներկայումս դեռևս ինչ-որ չափով գործուն, ինչպես նաև իբրև առանձին բարբառ կամ ներթափանցումային (ինտերֆերենտիվ) ձևով գործածվող բարբառների և խոսվածքների նյութի քննություն:

Ժողովածուն ունի սեղմ Առաջաբան (հեղ.՝ Վ. Կատվայան), ամփոփում է յոթ առանձին աշխատանք՝ «Ակնը և նրա բարբառը» (հեղ.՝ Ա. Աբրահամյան), «Մանագլերտի Դերիկ գյուղի խոսվածքը» (հեղ.՝ Զ. Բառնասյան), «Նիկոմեդիայի խոսվածքի ընդհանուր բնութագիրը» (հեղ.՝ Գ. Գևորգյան), «Եվդոկիայի բարբառը» (հեղ.՝ Հ. Խաչատրյան), «Ռոդոսթոյի կամ բուլղարահայերի բարբառի ընդհանուր բնութագիրը» (հեղ.՝ Հ. Մեսրոպյան), «Տավրիկ-Մոտկանի դիրքը հայերենի բարբառների շարքում և նրա առանձնահատկությունները» (ղեկ.՝ Գ. Մկրտչյան) և «Կորսված արևմտահայ բարբառների մասին տվյալներ հուշագրական երկերից» (հեղ.՝ Ն. Պողոսյան):

Հատկանշական է, որ տվյալ բարբառի, միջբարբառի կամ խոսվածքի քննության վերջում բերվում է նմուշ-օրինակ՝ Հ. Թումանյանի «Սուտասանը» («թարգմանված»), մասամբ նաև այլ նյութեր:

Սույն աշխատանքների համար ընդհանուր բնութագրականն այն է, որ դրանք հարցի ակնարկային քննություն են, չեն հավակնում վերջնական և լիակատար լինելու, մանավանդ որ հայտնի է, ինչպես նաև հեղինակներն են նշում, նախկինում գրվել են այդ բարբառներին կամ խոսվածքներին վերաբերող աշխատանքներ՝ սկսած մեծ ծավալի ուսումնասիրություններից մինչև այս կամ այն չափով կատարված դիտարկումներ:

Այսպես, Ակնի բարբառը նախկինում եղել է առանձին քննության առարկա, որ ժամանակին արժանացել է լայն ուշադրության: Ա. Աբրահամյանը բավականին սեղմ վերլուծությամբ, համապատասխան

գրականության մանրամասն նշումով ներկայացնում է այդ բարբառը, միաժամանակ գտնում, որ «իրատարականության է պատրաստվում առանձին աշխատություն Ակնի բարբառի վերաբերյալ՝ կից բառարանով (էջ 17-18), իսկ դա նշանակում է, որ դեռևս կան ոչ վերջնական լուծում ստացած հարցեր:

Զ. Բառնասյանի ուսումնասիրությունը վերաբերում է Մանագլերտի Դերիկ գյուղի խոսվածքին այնքանով, որքանով այն պահպանված է Արևելյան Հայաստանի Շիրակի տարածքի Ոսկեհասկ գյուղում բնակված մորից: Գրառումը կատարված է վերաբնակությունից տասնամյակներ անց, որ տվյալ խոսվածքի անխաթար մնալու հավանականությունը նվազում է, քանի որ արտալեզվական հանգամանքների բերումով փոփոխություններն անխուսափելի կարող են լինել: Այդուհանդերձ հեղինակը կատարել է ոչ միայն նյութի բարեխիղճ գրառում, այլև մանրամասն վերլուծություն՝ հայ բարբառների քննության ավանդական մեթոդիկայի կիրառմամբ, ներկայացվում են խոսվածքի հնչյունաբանությունը, բառապաշարը և քերականական կառուցվածքի կարևորագույն բաղադրիչները, որպիսով համալրվում է հայ բարբառների ամբողջական ուսումնասիրությունը:

Նիկոմեդիայի խոսվածքը, ըստ բարբառագիտական ատլասի կազմության ծրագրի, գրի է առնված եղել տասնամյակներ առաջ բարբառակիր ինֆորմանտներից, սակայն մինչև այժմ քննության չի արժանացել: Հավաքված այդ նյութի հիման վրա Գ. Գևորգյանը կատարել է ուշադրության արժանի քննություն՝ վեր հանելով խոսվածքի հնչյունական, ձևաբանական և շարահյուսական առանձնահատկությունները, իսկ վերջում կցել շուրջ վեց տասնյակ գրական լեզու-խոսվածք բառերի ցանկ՝ ցույց տալու դրանց «ձևային արտահայտությունը»:

Ժողովածուի ամենածավալուն աշխատանքը Հ. Խաչատրյանի՝ Եվդոկիայի միջբարբառին նվիրված ուսումնասիրությունն է, որում ևս նույնպիսի մոտեցումով քննվում են հնչյունական, ձևաբանական առանձնահատկությունները, ընդ որում առաջինի դեպքում ըստ ձայնավորների և բաղաձայնների դրսևորումների, իսկ երկրորդ դեպքում՝ ըստ քերականական կարգերի արտահայտության: Հեղինակի ակնարկային քննությամբ անգամ պարզ է դառնում միջբարբառի բնույթը, լուծվում են վերջինիս «տեղորոշման» հարցում եղած որոշ տարակարծություններ, հատկապես բաղաձայնների արտասանության դիրքային բաշխվածության («երկվության») հետ կապված:

Ռոդոսթոյի կամ բուլղարահայերի բարբառը քննության է առնված ըստ բարբառակիր տարածքներում կատարված հավաքչական աշխատանքի տվյալների, որով ավելի է մեծանում երևույթների հավաստիության շեմը: Հ. Մեսրոպյանը բավականին հարուստ փաստերով (օրինակներով) վերլուծում է բարբառի հնչյունական և քերականական կառուցվածքի իրողությունները՝ շեշտը դնելով հիմնական առանձնահատկությունների վրա: Այս դեպքում ևս նկատի է առնված գոյություն ունեցող ողջ գրականությունը՝ նվիրված այդ բարբառին ուղղակիորեն կամ այլ հանգամանքների մեջ: Աշխատանքում, բացի Թումանյանի պատմվածքից, բերվում է բարբառի ավելի ընդարձակ բնագիր, որի մի մասն ունի զուգահեռ թարգմանություն, ինչպես նաև վերջում ներկայացվում է բարբառի դարձվածային միավորների, հարադրությունների մի ցանկ՝ միավորների համապատասխան թարգմանությամբ:

Տալվորիկ-Մոտկանի բարբառի նկարագրության համար, ինչպես նշում է Գ. Մկրտչյանը, փաստական նյութը քաղված է Գ. Զահուկյանի գրքից, այլև Հայերենի բարբառագիտական ատլասի նյութերի հավաքման ծրագրով գրառված հինգ տետրերից: Թերևս հարկ կար նյութեր քաղելու նաև բարբառի ներկայիս կրողների կենդանի խոսքից, մանավանդ որ նախորդ գրառումներից անցել է մի քանի տասնամյակ: Այնուհանդերձ աշխատանքը կատարված է բավականին բարեխղճորեն, հեղինակը լիովին տիրապետում է իր նյութին, կան ուշագրավ տեսական դիտարկումներ: Բարբառային միավորների նշանակումները կատարված են վերջին տարիներին մշակված համակարգով, որն այնքան էլ դյուրին չէ ընկալման տեսանկյունից:

Վերջին աշխատանքը ավելի շուտ բանասիրական-բառաքննական է, քան զուտ բարբառագիտական, քանի որ ուշադրության առարկա են, ցավոք, այլևս գոյություն չունեցող արևմտահայ բարբառների վերաբերյալ տարբեր կարգի հուշագրություններում տեղ գտած տվյալները: Ն. Պողոսյանը վերջին ժամանակները անդուլ աշխատանք է ծավալել ուշմիջնադարյան հայերեն գրավոր աղբյուրների լեզվական քննության ասպարեզում, և այս աշխատանքը մեկն է նրա՝ այս մարզում կատարվող ուսումնասիրություններից: Հեղինակը մանրամասն անդրադառնում է այն երկերին, որոնցում կան բարբառային միավորներ՝ լեզվի տարբեր մակարդակների վերաբերող: Աշխատանքը կատարված է բարեխղճորեն, ինչպես վայել է նման տիպի ուսումնասիրություններին: Վերջում բերվում է հավելված, որ պարունակում է հուշագրական երկերից

քաղված բարբառային բառեր՝ բացատրված ըստ տեղի, և դա կարևոր է հայոց լեզվի ընդհանուր բառապաշարի պատմության տեսանկյունից:

«Հայերենի բարբառագիտական ատլաս» (պրակ 4) ժողովածուն նկատելի ձեռքբերում է հայերենի կորստյան մատնված բարբառների նորովի կամ ամբողջովին նոր ուսումնասիրության մեջ, որ իրականացրել է ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի բարբառագիտության բաժինը:

Վ. Գ. Հ.